

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N 24-ՀԲՄԱՇՁԲ-22/5-Ա**

ք. Երևան

«11»  2022թ.

«Ջրային կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները ժամանակավոր կատարող Ա. Մարգարյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և ԱՍ ՇԻՆ ՏՐԱՆՍ ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Եղիկյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաբերթ-նախահաշվով նախատեսված Չափաբաժին 1 գետերի ափերի պաշտպանության աշխատանքներ - «Երվանդաշատ համայնքի Արաքս գետի ափապաշտպան արգելաթմբի բարձրացում մոտ 650մ», Չափաբաժին 4 «Տանձուտ և Փամբակ գետերի ափապաշտպան հենապատերի վերականգնում մոտ 600մ երկարությամբ հատվածում» աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաբերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ Չափաբաժին 1 - 95 աշխատանքային օր և Չափաբաժին 4 - 10 ամիս (համաձայն նախագծային փաստաթղթերի):

Աշխատանքների կատարման երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից պայմանագրի արդյունքն ընդունելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:

1.3.1 Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

1.3.2 Պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետների մեջ չեն հաշվարկվում.

1.3.2.1 հեղինակային և/կամ տեխնիկական հսկողության պայմանագրերի լուծման դեպքում՝ պայմանագրերի լուծման օրվանից մինչև նոր պայմանագրերի կնքմանը հաջորդող օրն ընկած ժամանակահատվածը,

1.3.2.2 շինարարական աշխատանքների կատարումն անհնարին դառնալու օրվանից մինչև դրանց վերսկսելու օրն ընկած ժամանակահատվածը, որն արձանագրվում է տեխնիկական և հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպությունների առաջարկության հիման վրա՝ պարասխանադու ստորաբաժանման կողմից տրված եզրակացությամբ:

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառու ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառու խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա

Կապալառուին պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 2.1 Հավելվածում:

3.4.10 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն պյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.1.1 Կապալառուն ներկայացնում է կատարողական փաստաթղթերի փաթեթը, որը պետք է կազմված լինի տեխնիկական հսկողություն և հեղինակային հսկողություն իրականացնող անձանց մասնակցությամբ:

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 379 920 000 (երեք հարյուր յոթանասունինը միլիոն իննը հարյուր քսան հազար) ՀՀ դրամ, որից 63 320 000 (վաթսուներեք միլիոն երեք հարյուր քսան հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

1-ին չափաբաժին 114 000 000 (մեկ հարյուր տասնչորս միլիոն) ՀՀ դրամ՝ որից 19 000 000 (տասնինը միլիոն) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

4-րդ չափաբաժին 265 920 000 (երկու հարյուր վաթսուներեք միլիոն իննը հարյուր քսան հազար) ՀՀ դրամ՝ որից 44 320 000 (քառասունչորս միլիոն երեք հարյուր քսան հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

5.1.1 Պայմանագրի գնից՝ մինչև 56988000 (Հիսունվեց միլիոն ինը հարյուր ութսունութ միլիոն) ՀՀ դրամը (որից 1-ին չափաբաժնի համար՝ 17100000 (տասնյոթ միլիոն հարյուր հազար) ՀՀ դրամ, 2-րդ չափաբաժնի համար՝ 39888000 (երեսունինը միլիոն ութ հարյուր ութսունութ հազար) ՀՀ դրամ), Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կապալառուին վճարումներ չեն կատարվում:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուի ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս

են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 28 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N2.1, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:


8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
Հ/Հ 900011034569
ՀՎՀՀ 02555816

Կոմիտեի գլխավոր քարտուղարի
պարտականությունները
ժամանակավոր կատարող



Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ
(ստորագրություն)



ԿԱՊԱԼԱՐՈՒ

«ԱՍ ՇԻՆ ՏՐԱՆՍ» ՍՊԸ
ք. Երևան 0054, Դավթաշեն 1 թաղ., 322,
բն. 22, հեռ 033500555
Էլ փոստ exikjan@mail.ru
ՀՎՀՀ 01249476
Հ/Հ 220290123409000

տնօրեն


Ա. ԵՂԻԿՅԱՆ



ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*
«ԳԵՏԵՐԻ ԱՓԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ»
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Չափաբաժին 1
գետերի ափերի պաշտպանության աշխատանքներ - «Երվանդաշատ համայնքի Արաքս գետի
ափապաշտպան արգելաթմբի բարձրացում մոտ 650մ»

հիմնավորում	Աշխատանքների անվանումը	Չափ. միավորը	Քա- նակը	Միավորի արժեքը, հազ.դրամ	Ընդհանուր արժեքը, հազ.դրամ
2	3	4	5	6	7
	1.Ափապաշտպան արգելաթմբի բարձրացում				
	<u>Հողային աշխատանքներ</u>				
1-52	Արգելաթմբի կատարի մաքրում բուսականությունից, թփուտներից / բուսախառը հողային շերտի հեռացում էքսկավատորով կողլիցքով /	մ ³	192	0.2975	57.12
1-235	III կարգի բնահողերի կտրում բուլդոզերով տեղափոխումով 10մ , կուտակումով	մ ³	2182.0	0.7934	1731.09
1-51	III կարգի բնահողերի քանդում էքսկավատորով կողլիցքով / գաբիոնե տեղադրման համար/	մ ³	282.15	0.6942	195.86
1-961	III կարգի բնահողերի քանդում ձեռքով կողլիցքով / գաբիոնե տեղադրման համար/	մ ³	14.85	1.9834	29.45
46-6, k=0.4 կիրառելի	Խոշոր քարերի բարձում ավտոամբարձիչով ինքնաթափ /1-3տ-ոց քարեր/	մ ³	3393.5	4.9584	16826.25
1-161	Քարերի բարձում էքսկավատորով 1.25մ3 ինքնաթափ / /1-3տ-ոց քարեր/	մ ³	3393.5	1.9834	6730.50
միջինացված շուկայական արժեք	Բարձաց քարերի տեղափոխում 3.5կմ հեռավորությունից	տ	17645.97	0.9917	17499.30
38-3	Քարե լիցքի իրականացում բուլդոզերով, խտացումով, շերտի հաստությունը 1.5-2մ, ներառյալ քարի արժեքը	մ ³	8177.00	0.2975	2432.71
1-170	III րդ կարգի կոպձ-ավազային բնահողերի քանդում էքսկավատորով բարձումով	մ ³	1994.00	0.4958	988.71

	ինքնաթափ				
միջինացված շուկայական արժեք	Բարձագ բնահողի տեղափոխում 3.5կմ հեռավորությունից	տ	3489.50	0.9917	3460.50
1-50	Քանդած և կուտակված III կարգի բնահողերի քանդում էքսկավատորով մատուցումով քարե լիցքի վրա լիրքի ստեղծման համար	մ ³	2479	0.2479	614.60
1-449	Կոպձավազային բնահողերից լիրքի իրականացում բուլդոզերով 96կՎտ տեղափոխումով 10մ	մ ³	4473	0.2975	1330.75
1-1167, 1-1172	Լիրքի խտացում ճտ-ոց գլդոնով, 25սմ շերտով և 2 անցումով մեկ հետքի վրայով	մ ³	4473	0.4958	2217.91
PEP-88 3-73, k=0.9, ինֆորմ	Գաբիոնի տեղադրում, չոր պայմաններում առանց ցանցի գործման, ներառյալ քարի արժեքը, մատակարարումը	մ ³	1704.0	9.9169	16898.37
շուկա	Պատրաստի գաբիոնի ցինկապատ ցանցապարկ 2x1x1 չափերի, լարի Փ2.7մմ, արժեք, մատակարարում	հատ	852	21.8171	18588.21
շուկա	Ցինկապատ լար գաբիոնի ցանցապարկի կապելու համար, արժեք, մատակարարում	մ	6816.00	0.0992	675.93
	<u>Ընդամենը ըստ 1 բաժնի</u>				90277.26
	2.Կարձապատնեշ N1				
	<u>Հողային աշխատանքներ</u>				
46-6, k=0.4 կիրառելի	Խոշոր քարերի բարձում ավտոմեքարծիչով ինքնաթափ /1-3տ-ոց քարեր/	մ ³	170.2	4.9584	843.68
1-161	Քարերի բարձում էքսկավատորով 1.25մ3 ինքնաթափ / /1-3տ-ոց քարեր/	մ ³	170.2	0.9917	168.74
միջինացված շուկայական արժեք	Բարձագ քարերի տեղափոխում 3.5կմ հեռավորությունից	տ	884.78	0.9917	877.43
38-3	Կարձապատնեշի քարե լիցքի իրականացում բուլդոզերով, խտացումով, շերտի հաստությունը 1.5-2մ, ներառյալ քարի արժեքը	մ ³	410.00	0.9917	406.59

1-170	III ռդ կարգի կոպճ-ավազային բնահողերի քանդում էքսկավատորով բարձունով ինքնաթափ	մ ³	36.00	0.6942	24.99
միջինացված շուկայական արժեք	Բարձաց բնահողի տեղափոխում 3.5կմ հեռավորությունից	տ	63.00	0.7934	49.98
1-449	Կոպճավազային բնահողերից լիրքի իրականացում բուլդոզերով 96կՎտ տեղափոխումով 10մ	մ ³	36	0.4958	17.85
1-1167, 1-1172	Լիրքի խտացում 6տ-ոց գլդոնով, 25սմ շերտով և 2 անցումով մեկ հետքի վրայով	մ ³	36	0.9917	35.70
	Ընդամենը ըստ 2 բաժնի				2424.96
	3.Կարճապատնեշ N2				
	<u>Հողային աշխատանքներ</u>				
46-6, k=0.4 կիրառելի	Խոշոր քարերի բարձուն ավտոամբարձիչով ինքնաթափ /1-3տ-ոց քարեր/	մ ³	169.3	4.9584	839.56
1-161	Քարերի բարձուն էքսկավատորով 1.25մ3 ինքնաթափ / /1-3տ-ոց քարեր/	մ ³	169.3	1.4875	251.87
միջինացված շուկայական արժեք	Բարձած քարերի տեղափոխում 3.5կմ հեռավորությունից	տ	880.46	0.9917	873.15
38-3	Կարճապատնեշի քարե լիցքի իրականացում բուլդոզերով, խտացումով, շերտի հաստությունը 1.5-2մ, ներառյալ քարի արժեքը	մ ³	408.00	0.4958	202.30
1-170	III ռդ կարգի կոպճ-ավազային բնահողերի քանդում էքսկավատորով բարձունով ինքնաթափ	մ ³	33.00	0.7934	26.18
միջինացված շուկայական արժեք	Բարձաց բնահողի տեղափոխում 3.5կմ հեռավորությունից	տ	57.75	0.7934	45.82
1-449	Կոպճավազային բնահողերից լիրքի իրականացում բուլդոզերով 96կՎտ տեղափոխումով 10մ	մ ³	33	0.7934	26.18
1-1167, 1-1172	Լիրքի խտացում 6տ-ոց գլդոնով, 25սմ շերտով և 2 անցումով մեկ հետքի վրայով	մ ³	33	0.9917	32.73

	<u>Ընդամենը ըստ 3 բաժնի</u>				2297.79
	<u>Չնախատեսված ծախսեր և աշխատանքներ 1.5% (հիմնավորող փաստաթղթերի հիման վրա տրամադրվող տոկոս)</u>				
	<u>Ընդամենը ըստ 1-3 բաժինների</u>				95000.000
	ԱԱՀ 20%				19000.000
	Ընդամենը՝ ԱԱՀ-ով				114000.000

Չափաբաժին 4

գետերի ափերի պաշտպանության աշխատանքներ - <<Տանձուտ և Փամբակ գետերի ափապաշտպան հենապատերի վերականգնում մոտ 600մ երկարությամբ հատվածում>>

<<	Աշխատանքների անվանումը	Չափ. միա- վորը	Քա- նակը	Միավորի արժեքը, հազ.դրամ	Ընդհանուր արժեքը, հազ.դրամ
1	2	3	4	5	6
	<u>1. Գետ Տանձուտ: Հատված 1 Գաբիոնի շարվածք ՊԿ0+00-ՊԿ0+81</u>				
	<u>Հողային աշխատանքներ</u>				
1.1	Գետի հունի մաքրում թփուտներից և բուսականությունից	մ ²	400	0.187	74.610
1.2	V կարգի բնահողերի մշակում էքսկավատորով կողիցքով	մ ³	141.5	0.746	105.574
1.3	VI կարգի բնահողերի մշակում էքսկավատորով խրամուղու ստեղծումով կողիցքով	մ ³	70.0	1.119	78.341
1.4	Փոստրակիլ հատակի լրամշակում ձեռքով հետահար մուրճով Vբ-րդ կարգի բնահողերում	մ ³	3.5	3.264	11.425
1.5	Գաբիոնե շարվածքի համար քարերի հավաքում բուլդոզերով կուտակումով / 51մ ³ օգտակարա հանույթից, 498մ ³ հավաքել մոտակա տարածքից/	մ ³	498.0	0.280	139.335
1.6	Կուտակված քարերի բարձում էքսկավատորով ինքնաթափ	մ ³	498	0.466	232.225
1.7	Բարձած քարերի տեղափոխում ինքնաթափերով մինչև 300մ -ից գաբիոնե շարվածքի համար	տ	1145.4	0.280	320.470
1.8	Գաբիոնի տեղադրում չոր պայմաններում առանց ցանցի գործման, քարը օգտակար հանույթից	մ ³	51.0	2.798	142.692
1.9	Գաբիոնի տեղադրում չոր պայմաններում առանց ցանցի գործման, քարը բերովի	մ ³	493.0	4.663	2298.932

1.10	Գաբիոնի պատրաստի ցինկապատ ցանցապարկ 2x1x0.5մ չափերի, լարը Φ2.7մմ, արժեք, մատակարարում	հատ	220	9.326	2051.785
1.11	Ցինկապատ լար գաբիոնի ցանցապարկը կապելու համար, արժեք, մատակարարում	մ	1232.0	0.093	114.900
1.12	Գաբիոնի պատրաստի ցինկապատ ցանցապարկ 2x1x1մ չափերի, լարը Φ2.7մմ, արժեք, մատակարարում	հատ	162	19.585	3172.805
1.13	Ցինկապատ լար գաբիոնի ցանցապարկը կապելու համար, արժեք, մատակարարում	մ	907.2	0.093	84.608
1.14	Հետլիցքի իրականացում ձեռքով տոփանումով օգտակար հանույթի բնահողերով գաբիոնե շարվածքի ետմանասում, բացառությամբ խոշորաբեկոր քարերից	մ ³	132	0.280	36.932
1.15	Հետլիցքի վրա կավային բնահողերից լիցքի ստեղծում ձեռքով տոփանումով, ներառյալ կավային բնահողերի արժեքը, մատակարարումը	մ ³	170	1.865	317.094
1.16	Ավելորդ բնահողերի հարթեցում բուլդոզերով տեղափոխումով մինչև 10մ	մ ³	32.0	0.280	8.953
	Ընդամենը ըստ 1-ին բաժնի				9190.681
<u>2. Գետ Տանձուտ: Հատված 2 Հենապատի վերականգնում</u>					
<i><u>Հողային աշխատանքեր</u></i>					
2.1	IV կարգի բնահողերի մշակում էքսկավատորով բարձրումով ինքնաթափ /հունի մաքրում/	մ ³	115.0	0.373	42.901
2.2	Բարձած բնահողերի տեղափոխում ինքնաթափերով մինչև 7կմ թափոնավայր	տ	224.3	0.513	115.028
2.3	II կարգի բնահողերի մշակում էքսկավատորով կողիցքով	մ ³	158.0	0.373	58.942
2.4	VI կարգի բնահողերի մշակում էքսկավատորով խրամուղու ստեղծումով կողիցքով	մ ³	36.0	1.399	50.362
2.5	VI կարգի բնահողերի մշակում էքսկավատորով խրամուղու ստեղծումով բարձումով	մ ³	21.0	1.585	33.295
2.6	Բարձած բնահողերի տեղափոխում ինքնաթափերով մինչև 7կմ թափոնավայր	տ	48.3	0.513	24.775
2.7	VI կարգի բնահողերի մշակում էքսկավատորով խրամուղու ստեղծումով կողիցքով ջրի պայմաններում մինչև 2մ խորությամբ	մ ³	143.0	1.725	246.727
2.8	Հետլիցքի իրականացում ձեռքով տոփանումով օգտակար հանույթի բնահողերով հենապատի ետմանասում, բացառությամբ խոշորաբեկոր քարերից	մ ³	158	2.332	368.389
2.9	Հետլիցքի իրականացում ձեռքով տոփանումով օգտակար հանույթի բնահողերով հենապատի ետմանասում, բացառությամբ խոշորաբեկոր քարերից	մ ³	18	2.332	41.968
2.10	Գաբիոնե շարվածքի և խամքարաբետոնի քարի համար քարերի հավաքում բուլդոզերով կուտակումով / 143.5*0.44+22*1.01/	մ ³	85.4	0.746	63.687
2.11	Կուտակված քարերի բարձում էքսկավատորով ինքնաթափ	մ ³	85.4	0.233	19.912

2.12	Բարձած քարերի տեղափոխում ինքնաթափերով մինչև 300մ -ից գաբիոնե շարվածքի և խամքարաբետոնի համար	տ	196.4	0.233	45.797
2.13	Գաբիոնի տեղադրում չոր պայմաններում առանց ցանցի գործման, քարը բերովի	մ³	22.0	4.663	102.589
2.14	Գաբիոնի պատրաստի ցինկապատ ցանցապարկ 2x1x0.5մ չափերի, լարը Φ2.7մմ, արժեք, մատակարարում	հատ	22	13.057	287.250
2.15	Ցինկապատ լար գաբիոնի ցանցապարկը կապելու համար, արժեք, մատակարարում	մ	123.2	0.093	11.490
2.16	Կավային բնահողերից լիցքի ստեղծում ձեռքով տոփանումով, ներառյալ կավային բնահողերի արժեքը, մատակարարումը	մ³	66	0.933	61.554
